ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 17.11.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/300

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 03.11.2021թ. թիվ 26/26-1/17956-2021 գրությամբ «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ նախագահի աշխատակազմի 27.10.2021թ. թիվ ԱՂ-1258-2021 գրության հիման վրա, 03.11.2021թ. թիվ 26/26-1/17956-2021 գրությամբ նախաձեռնել է «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/300 ընթացակարգի շրջանակներում 11.11.2021թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ նախագահի աշխատակազմի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ նախագահի աշխատակազմը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 27.10.2021թ. թիվ ԱՂ-1258-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հանրապետության նախագահի աշխատակազմը մասնակի միակողմանի լուծել է «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ի հետ 26.03.2021թ.-ին կնքված ՀՆԱ-ԳՀԾՁԲ-21/22 ծածկագրով «Պետության կարիքների համար ջեռուցման կաթսաների վերանորոգման և պահպանման ծառայությունների մատուցման» գնման պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր): Պայմանագիրը միակողմանի լուծելու հիմք է հանդիսացել «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ի կողմից պայմանագրով ստանձնած պարտավորությունները խախտելու հանգամանքը, մասնավորապես «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ն պայմանագրով նախատեսված ժամկետում ծառայությունը չի մատուցել և հրաժարվել է կատարել պայմանագրով ստանձնած պարտավորությունները:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526 որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի համաձայն՝ Ձեզ ենք տրամադրում «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/300 ընթացակարգի շրջանակներում 11.11.2021թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/300 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/300 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ նախագահի աշխատակազմի և «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ի միջև 26.03.2021թ. կնքվել է թիվ «ՀՆԱ-ԳՀԾՁԲ-21/22» ծածկագրով պետության կարիքների համար ջեռուցման կաթսաների վերանորոգման և պահպանման ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի համաձայն՝

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ջեռուցման կաթսաների վերանորոգման և պահպանման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. Պայմանագրին կից հավելված N 1-ի՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ծառայությունների մատուցման ժամկետ է սահմանվել 21-րդ օրացուցային օրը՝ հաշված պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից, իսկ վերջնաժամկետը մինչև 2021 թվականի դեկտեմբերի 25-ը:

Ծառայությունները մատուցվում են համաձայն Պատվիրատուի ներկայացրած հայտի՝ սահմանված ժամկետում: Պատվիրատուն հայտը ներկայացնում է հեռախոսազանգի կամ էլեկտրոնային փոստի միջոցով: Կատարողը պարտավոր է ոչ ուշ, քան հայտը ստանալուն հաջորդող օրացուցային օրը տեղում զննել խնդիրը և կատարվելիք վերանորոգման աշխատանքները Պատվիրատուի հետ համաձայնեցնելուց անմիջապես հետո սկսել ծառայությունների մատուցումը:

3. Պատվիրատուն «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ին ուղղված 15.10.2021թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հանրապետության նախագահի աշխատակազմի և Ձեր ընկերության միջև 26.03.2021թ. կնքված ՀՆԱ-ԳՀԾՁԲ-21/22 ծածկագրով պետության կարիքների համար ջեռուցման կաթսաների վերանորոգման և պահպանման ծառայությունների մատուցման

պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) շրջանակներում 13.10.2021թ. Ձեզ հայտնել էինք պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման անհրաժեշտության մասին: 14.10.2021թ.-ին Ձեր ընկերության մասնագետները զննել են խափանված ջեռուցման կաթսայի թերությունները և հայտնել են, որ նշված ջեռուցման կաթսայի վերանորոգման աշխատանքները կիրականացնեն ոչ ուշ, քան 18.10.2021թ.:

Հայտնում ենք, որ վերը նշված ժամկետում պայմանագրով նախատեսված ծառայության մատուցումը չիրականացնելու դեպքում պատվիրատուի ղեկավարին կներկայացնենք մեր կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու առաջարկ:

Առաջարկում ենք ձեռնարկել միջոցներ սահմանված ժամկետներում պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ուղղությամբ»:

4. «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ն Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավար Է. Տարասյանին ուղղված 20.10.2021թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ, որ կորոնավիրուսի համաճարակի պատճառով անհաղթահարելի բարդություններ են առաջացել աշխատակիցների առողջության հետ կապված: Այդ իսկ պատճառով «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ն չի կարող շարունակել կատարել ՀՆԱ-ԳՀԾՁԲ-21/22 ծածկագրով «Պետության կարիքների համար ջեռուցման կաթսաների վերանորոգման և պահպանման ծառայությունների մատուցման» պայմանագրով սահմանված պարտականությունները: Հայցում ենք Ձեր ներողամտությունը»:

5. Պատվիրատուն «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ին ուղղված 22.10.2021թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հանրապետության նախագահի աշխատակազմի և Ձեր ընկերության միջև 26.03.2021թ. կնքված ՀՆԱ-ԳՀԾՁԲ-21/22 ծածկագրով «Պետության կարիքների համար ջեռուցման կաթսաների վերանորոգման և պահպանման ծառայությունների մատուցման» գնման պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) նախատեսված ջեռուցման կաթսաների վերանորոգման և պահպանման ծառայությունները Ձեր ընկերության կողմից չեն մատուցվում: Ձեր ընկերությունը խախտել է պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը:

Հանրապետության նախագահի աշխատակազմի պատասխանատու ստորաբաժանումը 15.10.2021թ. էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկված գրությամբ Ձեզ հայտնել է, որ մինչև 18.10.2021թ. պայմանագրով նախատեսված ծառայության մատուցումը (պահանջվող չափով) չիրականացնելու դեպքում պատվիրատուի ղեկավարին կներկայացնի պայմանագիրը միակողմանի լուծելու առաջարկ; 20.10.2021թ. Ձեր

պատասխան գրությամբ հայտնել եք, որ կորոնավիրուսի համաճարակի և աշխատակիցների առողջական վիճակի պատճառով չեք կարող շարունակել կատարել պայմանագրով սահմանված պարտականությունները: Ընդ որում Ձեր կողմից չի առաջարկվել ծառայությունների մատուցման նոր ժամկետ, այնինչ ջեռուցումը մեկնարկելու համար անհրաժեշտություն կա անհապաղ սկսել ծառայությունների մատուցումը:

Հայտնում ենք Ձեզ, որ պայմանագիրը կնքվել է նույն կորոնավիրուսի համավարակի պայմաններում, և Ձեր ընկերությունը պարտավոր էր հաշվի առնել այդ ռիսկերը և պայմանագրային պարտավորությունները պատշաճ կատարելու համար նախապես ձեռնարկեր համապատասխան միջոցներ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և պայմանագրի 2.1.3 կետի «բ» պարբերությունը՝ Հանրապետության նախագահի աշխատակազմը 22.10.2021թ. մասնակի՝ 529.834 (հինգ հարյուր քսանինը հազար ութ հարյուր երեսունչորս) ՀՀ դրամի մասով, միակողմանի լուծում է Հանրապետության նախագահի աշխատակազմի և «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ի միջև 26.03.2021թ. կնքված ՀՆԱ-ԳՀԾՁԲ-21/22 ծածկագրով գնման պայմանագիրը: (...)»:

6. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 22.10.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 03.11.2021թ. թիվ 26/26-1/17956-2021 գրությունը, ՀՀ նախագահի աշխատակազմի 27.10.2021թ. թիվ ԱՂ-1258-2021 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, ՀՀ նախագահի աշխատակազմի և «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ի միջև 26.03.2021թ. կնքվել է թիվ «ՀՆԱ-ԳՀԾՁԲ-21/22» ծածկագրով պետության կարիքների համար ջեռուցման կաթսաների վերանորոգման և պահպանման ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագիր, որի 1-ին կետի համաձայն՝

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ջեռուցման կաթսաների վերանորոգման և պահպանման ծառայությունների մատուցման

պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագրին կից հավելված N 1-ի՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ծառայությունների մատուցման ժամկետ է սահմանվել 21-րդ օրացուցային օրը՝ հաշված պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից, իսկ վերջնաժամկետը մինչև 2021 թվականի դեկտեմբերի 25-ը:

Ծառայությունները մատուցվում են համաձայն Պատվիրատուի ներկայացրած հայտի՝ սահմանված ժամկետում: Պատվիրատուն հայտը ներկայացնում է հեռախոսազանգի կամ էլեկտրոնային փոստի միջոցով: Կատարողը պարտավոր է ոչ ուշ, քան հայտը ստանալուն հաջորդող օրացուցային օրը տեղում զննել խնդիրը և կատարվելիք վերանորոգման աշխատանքները Պատվիրատուի հետ համաձայնեցնելուց անմիջապես հետո սկսել ծառայությունների մատուցումը:

Պատվիրատուն «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ին ուղղված 15.10.2021թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հանրապետության նախագահի աշխատակազմի և Ձեր ընկերության միջև 26.03.2021թ. կնքված ՀՆԱ-ԳՀԾՁԲ-21/22 ծածկագրով պետության կարիքների համար ջեռուցման կաթսաների վերանորոգման և պահպանման ծառայությունների մատուցման պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) շրջանակներում 13.10.2021թ. Ձեզ հայտնել էինք պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման անհրաժեշտության մասին: 14.10.2021թ.-ին Ձեր ընկերության մասնագետները զննել են խափանված ջեռուցման կաթսայի թերությունները և հայտնել են, որ նշված ջեռուցման կաթսայի վերանորոգման աշխատանքները կիրականացնեն ոչ ուշ, քան 18.10.2021թ.:

Հայտնում ենք, որ վերը նշված ժամկետում պայմանագրով նախատեսված ծառայության մատուցումը չիրականացնելու դեպքում պատվիրատուի ղեկավարին կներկայացնենք մեր կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու առաջարկ:

Առաջարկում ենք ձեռնարկել միջոցներ սահմանված ժամկետներում պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ուղղությամբ»:

«Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ն Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավար Է. Տարասյանին ուղղված 20.10.2021թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ, որ կորոնավիրուսի համաճարակի պատճառով անհաղթահարելի բարդություններ են առաջացել աշխատակիցների առողջության հետ կապված: Այդ իսկ պատճառով ***«Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ն չի կարող շարունակել կատարել ՀՆԱ-ԳՀԾՁԲ-21/22 ծածկագրով «Պետության կարիքների համար ջեռուցման կաթսաների վերանորոգման և պահպանման ծառայությունների մատուցման» պայմանագրով սահմանված պարտականությունները***: Հայցում ենք Ձեր ներողամտությունը»:

Պատվիրատուն «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ին ուղղված 22.10.2021թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հանրապետության նախագահի աշխատակազմի և Ձեր ընկերության միջև 26.03.2021թ. կնքված ՀՆԱ-ԳՀԾՁԲ-21/22 ծածկագրով «Պետության կարիքների համար ջեռուցման կաթսաների վերանորոգման և պահպանման ծառայությունների մատուցման» գնման պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) նախատեսված ջեռուցման կաթսաների վերանորոգման և պահպանման ծառայությունները Ձեր ընկերության կողմից չեն մատուցվում: Ձեր ընկերությունը խախտել է պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը:

Հանրապետության նախագահի աշխատակազմի պատասխանատու ստորաբաժանումը 15.10.2021թ. էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկված գրությամբ Ձեզ հայտնել է, որ մինչև 18.10.2021թ. պայմանագրով նախատեսված ծառայության մատուցումը (պահանջվող չափով) չիրականացնելու դեպքում պատվիրատուի ղեկավարին կներկայացնի պայմանագիրը միակողմանի լուծելու առաջարկ; 20.10.2021թ. Ձեր պատասխան գրությամբ հայտնել եք, որ կորոնավիրուսի համաճարակի և աշխատակիցների առողջական վիճակի պատճառով չեք կարող շարունակել կատարել պայմանագրով սահմանված պարտականությունները: Ընդ որում Ձեր կողմից չի առաջարկվել ծառայությունների մատուցման նոր ժամկետ, այնինչ ջեռուցումը մեկնարկելու համար անհրաժեշտություն կա անհապաղ սկսել ծառայությունների մատուցումը:

Հայտնում ենք Ձեզ, որ պայմանագիրը կնքվել է նույն կորոնավիրուսի համավարակի պայմաններում, և Ձեր ընկերությունը պարտավոր էր հաշվի առնել այդ ռիսկերը և պայմանագրային պարտավորությունները պատշաճ կատարելու համար նախապես ձեռնարկեր համապատասխան միջոցներ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և պայմանագրի 2.1.3 կետի «բ» պարբերությունը՝ Հանրապետության նախագահի աշխատակազմը 22.10.2021թ. մասնակի՝ 529.834 (հինգ հարյուր քսանինը հազար ութ հարյուր երեսունչորս) ՀՀ դրամի մասով, միակողմանի լուծում է Հանրապետության նախագահի աշխատակազմի և «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ի միջև 26.03.2021թ. կնքված ՀՆԱ-ԳՀԾՁԲ-21/22 ծածկագրով գնման պայմանագիրը: (...)»:

<u>Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 22.10.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:</u>

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***<u>մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:</u>***

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

<u>բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:</u>

Պայմանագրի 5.6 կետի համաձայն՝ Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Այսպիսով՝ ուսումնասիրելով վերը շարադրված փաստական հանգամանքները՝ արձանագրում եմ, որ «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ն խախտել է իր և ՀՀ նախագահի աշխատակազմի միջև 26.03.2021թ. կնքված Պայմանագրով ստանձնած պարտավորությունները, ինչի արդյունքում Ընկերությունը թույլ է տվել Պայմանագրի էական խախտում, որն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծման:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 03.11.2021թ. թիվ 26/26-1/17956-2021 գրությամբ «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**